ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնք
գ. Դաշտավան, Գ.Տոնոյան Փ. 21, (0236) 6-39-80

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2012թվականի N 14-Ա

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ <<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի դրույթներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դաշտավան համայնքի սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի 9997.77 գծմ. համակարգերը մինչև 2037 թվականի հուլիսի 1-ը ՀՀ կառավարության 22.12.2011թ. N 1851-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի անհատույց օգտագործման>> պայմանագրով հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Դաշտավան համայնքի ղեկավար պարոն Սերյոժա Խաչատրյանին սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԱՀԱԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ՍՈՒՐԻԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ
4. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ ՄՈՒԿՈՒՉ

ՄԵՐՅՈՒԺԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ